ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

Մ. Վ. ՆԵՉԿԻՆԱ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ սովետական ականավոր պատմաբան, ակադեմիկոս Միլիցա Վասիլևնա Նեչկինայի ծննդյան 80 և գիտական ու մանկավարժական գործունեության 60-ամյակը: Տաղանդավոր գիտնականը վաղուց արդեն մեծ հարգանք ու հեղինակություն է վայելում ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան գիտնականների ու գիտական հասարակայնության շրջանում:

Մ. Վ. Նեչկինան ծնվել է 1901 թ. փետրվարի 25-ին Ուկրաինայում. բարձրագույն կրթությունը ստացել է Կազանի համալսարանում, ապա ավարտել է ասպիրանտուրա Մոսկվայում: Այստեղ էլ նա 1920-ական թթ. վերջերից սկսել է իր գիտական ու մանկավարժական գործունեությունը: Նեչկինայի աշխատանքի հիմնական կենտրոնները եղել են Մոսկվայի համալսարանը և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, որտեղ նա աշխատում է մինչև օրս:

Հարուստ և բեղմնավոր է Մ. Վ. Նեչկինայի գիտական գործունեությունը, որը աչքի է ընկնում իր բազմաբովանդակությամբ: Պատմաբանը զբաղվել է Ռուսաստանի և ՍՍՀՄ ժողովուրդների պատմության բազմաթիվ հանգուցային խնդիրներով. նա հաջողությամբ հետազոտել է ռուսական հեղափոխական շարժումների և դեմոկրատական հասարակական-քաղաքական հոսանքների, բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության, ռուսական պատմագիտական մտքի պատմության և այլ կարևոր հարցեր: Ժամանակագրական առումով գիտնականի հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1920-ական թթ.:

Մ. Վ. Նեչկինան մեծ ավանդ ունի մասնավորապես դեկաբրիստների շարժման գիտական ուսումնասիրության և նրա պատմության մասսայականացման գործում: Դեռևս 1927 թ. լույս տեսավ նոր փաստերով ու եզրակացություններով հարուստ նրա «Միացյալ սլավոնների ընկերությունը» աշխա-

տությունը: Հետագա տարիներին հրատարակվեցին Մ. Վ. Նեչկինայի մյուս արժեքավոր ուսումնասիրությունները ռուս առաջին հեղափոխականների գործունեության պատմության տարբեր հարցերի վերաբերյալ: 1955 թ. լույս տեսավ գիտնականի «Դեկաբրիստների շարժումը» երկհատոր կապիտալ աշխատությունը, ուր ընդհանրացված, ի մի են բերված այդ թեմային նվիրված նրա մոտ 30 տարվա գիտահետազոտական աշխատանքի արդյունքները: Այս ծանրակշիռ գործում շարադրված է դեկաբրիստների նախնական և ապա հիմնական կազմակերպությունների ստեղծման պատմությունը ու նրանց գործունեությունը: Հեղինակը այնուհետև հանգամանորեն լուսաբանում է դեկաբրիստների գաղափարախոսությունը, նրանց քաղաքական ծրագրերն ու նպատակները՝ մասնավորապես կանգ առնելով Ն. Մուրավյովի «Սահմանադրության» և Պ. Պեստելի «Ռուսսկայա պրավդայի» տեսական ու քաղաքական սկզբունքների վրա, տալիս է 1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում բռնկած ապստամբության, ինչպես նաև Ուկրաինայում գենքի դիմած Չերնիգովյան գնդի ելույթի պատմությունը և այլն: Աշխատության վերջին գլխում քննարկվում է դեկաբրիստների տեղը ռուսական հեղափոխական շարժման մեջ հարցը:

Ինչպես այս երկհատորյակում, այնպես էլ դեկաբրիստների մասին հրատարակված մյուս ուսումնասիրություններում, որոնց թիվը բավական մեծ է, Մ. Վ. Նեչկինան իրեն հատուկ խորաթափանցությամբ ու հմտությամբ լուծում է շատ խնդիրներ, որոնք մինչ այդ չէին ստացել իրենց լուսաբանությունը մեր պատմագրության մեջ: Անվանի պատմաբանը նոր տվյալների հիման վրա հաջողությամբ հերքում է դեկաբրիստական շարժման վերաբերյալ եղած անհիմն ու սխալ մի շարք տեսակետներ, այդ թվում և ռուս լիբերալ պատմաբանների ու Մ. Ն. Պոկրովսկու ոչ գիտական հայացքները: Քննարկվող հարցի վերաբերյալ ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինայի մենագրական ուսումնասիրություններն աչքի են ընկնում իրենց գիտական խորությամբ ու ինքնատիպությամբ:

Դեկաբրիստական շարժման պատմության հարցերը մշակելիս Մ. Վ. Նեչկինան հատուկ ուշադրություն է դարձրել գաղափարական այն կապերի վրա, որոնք գոյություն են ունեցել դեկաբրիստների և ռուս գրականության հանճարեղ ներկայացուցիչներ Ա. Ս. Պուշկինի և մասնավորապես Ա. Ս. Գրիբոյեդովի միջև: Դեռևս 1947 թ. լույս տեսավ պատմաբանի «Գրիբոյեդովը և դեկաբրիստները» աշխատությունը, որի համար նա ստացավ պետական մրցանակ: Այս աշխատությունը, որը համարվում է հեղինակի խոշոր ու արժեքավոր գործերից մեկը, գրված է չափազանց հարուստ արխիվային և գրական բազմազան նյութերի հիման վրա: Այստեղ ցույց են տրված մեծ գրողի ստեղծագործական, ընկերական կապերը մի շարք նշանավոր դեկաբրիստների հետ, վերջիններիս և Գրիբոյեդովի գաղափարական փոխազդեցությունները, այն ասոցիացիաները ու կապերը, որ եղել են գրողի և դեկաբրիստների խմբակների ու կազմակերպությունների միջև և այլն: Ամենայն մանրամասնությամբ քննարկելով «Խելքից պատուհասի» գաղափարական բովանդակությունը, Մ. Վ. Նեչկինան վեր է հանում այն առաջավոր, հեղափոխական սկզբունքները, որոնք բնդհանուր են եղել դեկաբրիստների ու Գրիբոյեդովի համար: Հարկ է նկատել, որ այս մենագրության մեջ կան հետաքրքիր էջեր՝ նվիրված Գրիբոյեդովի կյանքի վերջին տարիներին, երբ իրերի բերումով մեծ գրողը

դիվանագիտական գործունեություն ծավալեց Անդրկովկասում և Իրանում՝ առիթ ունենալով շփվելու Կովկաս ամսոված դեկաբրիստների հետ: Գրքի հեղինակը նշում է, որ այդ շրջանում Գրիբոյեդովը ամեն կերպ աշխատում էր օգնել կովկասյան կորպուսի զորամասերում գտնվող «խռովարար» իր ընկերներին, որոնց վիճակը խիստ ծանր էր: «Գրիբոյեդովը և դեկաբրիստները» աշխատությունը ունեցել է երեք հրատարակություն:

Մ. Վ. Նեչկինան գիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ հսկայական աշխատանք է կատարել դեկաբրիստական շարժման վերաբերյալ փաստաթղթեր և նյութեր հրապարակելու ուղղությամբ: Նրա անմիջական ղեկավարությամբ ու խմբագրությամբ լույս տեսան հայտնի բազմահատորյակի՝ «Դեկաբրիստների շարժումը. նյութեր» հարուստ ժողովածուի մի քանի հատորներ: Նեչկինայի անմիջական ջանքերով հայտնաբերվեցին և պատշաճ ձևով հրապարակվեցին շատ հետաքրքիր ու արժեքավոր փաստաթղթեր դեկաբրիստական շարժման մի շարք ղեկավար գործիչների և հատկապես Պ. Պեստելի մասին: Ականավոր պատմաբանի ղեկավարությամբ այսօր էլ շարունակվում է դեկաբրիստների պատմության վերաբերյալ արխիվային նյութերի հրատարակության շնորհակալ գործը:

Մ. Վ. Նեչկինան խոշոր ավանդ է ներդրել նաև Ռուսաստանում հեղափոխական շարժման երկրորդ փուլի՝ ռազնոչին մտավորականության շրջանի (1860—1880 թթ.) պատմության հետազոտման գործում: Չենք սխալվի, եթե ասենք, որ անցյալ դարի վաթսունական թվականների հեղափոխական փայլուն դեմքերի և ճարտնիկների գործունեության պատմությունը, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի հիմնական գծերի բացահայտումը նրա գիտական հետաքրքրությունների երկրորդ հիմնական բնագավառն է: Պատմաբանի գրչին են պատկանում բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված Ռուսաստանում առաջին հեղափոխական իրադրության ուսումնասիրությանը, ականավոր հեղափոխականներ Ն. Չերնիշևսկու, Ա. Գերցենի, Ն. Օգարյովի, «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության գործունեությանը և Ռուսաստանի XIX դարի հեղափոխական շարժման այլ հարցերին: Գիտնականը վերստեղծել է XIX դարի 50-ական թթ. և 60-ական թթ. սկզբի պատմության խոր և բազմակողմանի պատկերը, ցույց է տվել նորատիպական հասարակարգի հգնաժամը, որը և հանդիսացավ 1859—1861 թթ. Ռուսաստանում հեղափոխական իրադրության առաջացման հիմնական գործոնը:

Սովետական պատմաբաններից Մ. Վ. Նեչկինան առաջինը խոր հետազոտման ենթարկեց 60-ական թթ. հեղափոխական շարժումների հետ կապված բազմաթիվ կարևոր հարցեր: Նրա կողմից է առաջ քաշվել, օրինակ, հեղափոխական շարժման երկու՝ Լոնդոնյան (Գերցեն, Օգարյով) և Պետերբուրգյան (Չերնիշևսկի, Դոբրոլյուբով) կենտրոնների առկայության հարցը, բացահայտվել նրանց միջև եղած կապը, լուսաբանվել Ն. Չերնիշևսկու դերը՝ որպես հեղափոխական պայքարի կազմակերպչի, որը հսկայական գործ է կատարել ռուսական հեղափոխական ուժերի համախմբման համար:

Մեծամանակ վավերագրական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը (Օգարյովի ձեռագրերը, Չերնիշևսկու ստեղծագործությունները, «Կոլոկոլի» նյութերը, Դոբրոլյուբովի «Օրագիրը») հնարավորություն ընձեռեց Մ. Վ. Նեչկինային հանգել այն կարևոր եզրակացության, որ Չերնիշևսկին, Գերցենը և Օգարյովը հեղափոխական իրադրության շրջանում մշակում էին

միասնական հեղափոխական կազմակերպության ստեղծման ծրագիր և որ «Զեմլյա ի վոլյան» հանդիսացավ հենց այն կազմակերպությունը, որը կոչված էր գլխավորելու համընդհանուր գյուղացիական ապստամբությունը Ռուսաստանում: Մ. Վ. Նեչկինան ցույց է տվել, որ «Զեմլյա ի վոլյա» կազմակերպությունը ստեղծվեց հեղափոխական զույգ կենտրոնների համաձայնեցված որոշման հետևանքով: Միաժամանակ Մ. Վ. Նեչկինան, բացահայտելով պետերբուրգյան և լոնդոնյան կենտրոնների միջև եղած տակտիկական տարաձայնությունները, նշում է, որ հիմնական խնդրում՝ ռուսական հասարակության հեղափոխական վերափոխության անհրաժեշտության հարցում, երկու կենտրոններն էլ եղել են միասնական:

Մ. Վ. Նեչկինան զգալի ուշադրություն է դարձրել Դերցենի և Օգարյովի հեղափոխական գործունեության բնությանը, ցույց տվել նրանց հասարակական-քաղաքական էվոլյուցիան՝ ազնվականական հեղափոխականությունից դեպի հեղափոխական դեմոկրատիզմը: Մ. Վ. Նեչկինայի կողմից կատարված հետազոտական աշխատանքը նշանակալից չափով ընդլայնել է 60-ական թթ. Ռուսաստանում հեղափոխական շարժման թափի և խորության մասին եղած պատկերացումը, բացահայտել է այդ շարժման նոր, մինչ այդ անհայտ էջերը, ցույց տվել Ռուսաստանի հեղափոխական շարժման տարբեր փուլերի սերտ կապը և այլն: Հեղինակի բազմամյա հետազոտությունների արդյունքները ամփոփված են նրա «Երկու սերունդների հանդիպումը» գրքում (1980 թ.):

Մեծարգո հոբելյարը տարիներ շարունակ զբաղվել է նաև պատմական գիտության պատմության խնդիրներով: Այդ բնագավառում նա ստեղծել է մեծ ճանաչողությամբ աշխատություններ, կատարել է գիտակազմակերպչական խոշոր և արդյունավետ աշխատանք: Մ. Վ. Նեչկինայի ուսումնասիրությունների մի ամբողջ շարք նվիրված է այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է «Լենինը՝ ռուսական հեղափոխական շարժման պատմաբան» թեման: Բազմավաստակ գիտնականը ցույց է տվել, որ Ռուսաստանի պատմության լենինյան կոնցեպցիան հանդիսանում է սոցիալիստական հեղափոխության պատմական հիմնավորումը:

Մ. Վ. Նեչկինայի գիտական գործունեությունը շատ բանում է խթանել ուսումնասիրողների անող հետաքրքրությունը հայրենական պատմագիտական մտքի պատմության պրոբլեմների նկատմամբ: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է պատմական գիտության պատմության պրոբլեմների գիտական խորհուրդ, որն ունի իր հանրապետական մասնաճյուղերը: Խորհրդի կողմից կատարված է նշանակալից աշխատանք ՍՍՀՄ-ում պատմական մտքի պատմության ուսումնասիրման գործում: Խորհրդի և նրա անփոփոխ նախագահ՝ ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինայի ղեկավարությամբ իրականացվում է հայրենական պատմագրության առաջին խոշոր ընդհանրացնող աշխատության հրատարակությունը («Պատմական գիտության պատմության ակնարկներ», հատ. II—IV): Հրատարակվել են «Պատմություն և պատմաբաններ» պատմագրական տարեգրքի 10 հատորները, ուր լուսաբանվում են ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա պատմագրության տարբեր պրոբլեմներ:

Պատմագրության պատմության հարցերով Մ. Վ. Նեչկինան զբաղվել է իր գիտական գործունեության ամբողջ ընթացքում: Անվանի գիտնականի նախաձեռնությամբ և նրա անմիջական խմբագրությամբ հրատարակված են մի շարք կարևոր պատմական աղբյուրներ, այդ թվում՝ «Պոլյարնայա զվեզդայի»

մատենաշարը, լոնդոնյան ազատ ռուսական տպարանի հրատարակությունների բնագրերը և այլն:

Պատմագրական ուսումնասիրության փայլուն օրինակ է հանդիսանում Մ. Վ. Նեչկինայի «Վասիլի Օսիպովիչ Կլյուչևսկի» ֆունդամենտալ մենագրությունը (1974 թ.), ուր ընդհանրացված է հեղինակի բազմամյա աշխատանքի արդյունքը: Ռուս խոշորագույն բուրժուական պատմաբաններից մեկի՝ Վ. Կլյուչևսկու գործունեությունը քննարկված է տվյալ ժամանակաշրջանի և այն ժամանակվա պատմական գիտության ընդհանուր ֆոնի վրա: Այդ արժեքավոր մենագրության մեջ Մ. Վ. Նեչկինան լիովին դրսևորեց աղբյուրագիտական և պատմագիտական վերլուծության իր ակնառու տաղանդը:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց Մ. Վ. Նեչկինան հսկայական աշխատանք է կատարել նաև մանկավարժության բնագավառում: Տասնյակ տարիներ շարունակ նա Սովետական Միության ժողովուրդների պատմություն է դասավանդել Մոսկվայի պետական համալսարանում և բարձրագույն ուսումնական մյուս հաստատություններում: Նրա նախաձեռնությամբ ու խմբագրությամբ լույս են տեսել մի շարք բարձրորակ դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, որոնցով սովորել են մեր երկրի բոլոր երիտասարդ պատմաբանները: Նեչկինայի աճեցրած բազմաթիվ կադրերն այսօր հաջողությամբ աշխատում են սովետական պատմագրության զանազան տեղամասերում: Նրա աշակերտների շարքում քիչ թիվ չեն կազմում նաև հայ պատմաբանները: Գիտական ակադեմիկոսը միաժամանակ Սովետական Միության Մանկավարժական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է:

Մ. Վ. Նեչկինայի գիտական ու մանկավարժական գործունեությունը լայն ճանաչում է գտել սովետական հասարակայնության շրջանում և արժանացել է բարձր գնահատականի: Նա պարգևատրվել է Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով: Պատմագիտության զարգացման և գիտական կադրեր պատրաստելու գործում ունեցած խոշոր ծառայության համար նա վերջերս, ՍՍՀՄ Գերագույն սովետի ս. թ. փետրվարի 24-ի հրամանագրով նորից, երրորդ անգամ, ստացավ Լենինի շքանշան:

Ջերմորեն ողջունելով բազմավաստակ պատմաբանին ծննդյան ութսունամյակի առթիվ, ցանկանանք նրան առողջություն և նոր հաջողություններ գիտական ստեղծագործության բնագավառում:

Պրոֆ. Մ. Դ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Պրոֆ. Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ